*ամփոփումն է:* Էջ 351–353 *«Համառօտագրութիւններ»:* Էջ 354*ով կը սկսի «Ուսումնասիրութեան մէջ օգտագործուած գրոյցների, առակների, խրատների ցանկ եւ ծանօթագրութիւններ»:* Էջ 370*ով կը սկսի «Բնագրերի ծանօթագրութիւններ»: Անկէ վերջ կը տրուի «Օգտագործուած ձեռագրերի ցանկ եւ նկարագրութիւն»* (*թուով* 88 *ձեռագիր*)*: Վերջապէս «Օգտագործուած գրականութեան ցանկ», «Զրոյցների այբբենական ցանկ», «Անուանացանկ», «Բառարան» եւ մանրամասն «Բովանդակութիւն» ու կ'աւարտի այս գնահատելի եւ արժէքաւոր աշխատութիւնը: Մաղթենք որ Տիկին Արմէնուհի Սրապեան ձեռք զարնէ զրոյցներու գիտահամեմատական հրատարակութեանը, քանի որ ինք այս աշխատութեամբ՝ անուրանալի կերպով ձեռնհաս է նման դժուար գործի մը գիտնականապէս կատարման համար: Գործը անտարակոյս դժուար եւ բազմաշխատ գործ է. որով կարիք ունի փորձ եւ կարող գիտաշխատողի, որպիսին է գիտնական բանասէր Տիկին Արմէնուհի Սրապեան:*

* * *

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԱՏՔ ԽԻԿԱՐԱՅ ԻՄԱՍՏՆՈՅ: Գիրք առաջին, աշխատասիրութեամբ Արտաշէս Ա. Մարտիրոսեանի: Երեւան, 1969, հրատարակութիւն Մաշտոցի անուան Մատենադարանի: Լաթակազմ, ութածալ, էջ 364:

*Երիտասարդ եւ մեղուաջան բանասէր՝ Արտաշէս Մարտիրոսեան մեզի կը տրամադրէ ընտիր աշխատութիւն մը, իր այս հատորով: Հատորը կը սկսի «Խիկարի գրոյցը եւ նրա աղբիւրները» հատուածով, ուր կը յիշուի իրաւամբ թէ Խիկարի գրոյցը մեզի ծանօթ Արեւելքի հնագոյն երկու գրոյցներէն մին է: (Միւսը՝* Գիլգամէշի *վէպը):*

*Խիկարի գրոյցը ժամանակ մը նոյնացուած էր կամ խառնուած Եզոպոսի անուան հետ: Սակայն, գործը իբր «Պատմութիւն Խիկարայ», հայերէն արդէն հրատարակուած կը գտնենք 1708ին: «Դա Խիկարի անունով գրոյցի ամենահին հրատարակութիւնն է»* (*էջ* 16)*, կ'ըսէ Մարտիրոսեան: Իրեն կը պարտինք գործին եւրոպական մատենագիտութեան հետ նաեւ հայերէն մատենագիտութիւնը:*

*Խիկարի գրոյցին ամենահին հայերէն ձեռագիր օրինակը պահուած է Երեւանի Մատենադարանին թիւ* 2961 *ժողովածուին մէջ,* 1321*ին գրուած, Մխիթար Անեցի գրչէն: Մնացեալ օրինակութիւնները ԺԷ. դարէն կամ անկէ վերջ կատարուած են: Քիչ օրինակներ կան, որոնք ԺԵ–ԺԶ. դարէն կարելի ըլլայ նկատել: Իմ հաւաքածոյս մէկ օրինակը* 1526*էն է:*

*Մարտիրոսեան կը հաւաստէ որ գործին «Առաջին թարգմանութիւնը կատարուել է Ը. դարում՝ Ստեփանոս Սիւնեցու, իսկ երկրորդը՝ ԺԷ. դարում, Ստեփանոս Լեհացու կողմից»* (*էջ* 44)*:*

*Հեղինակը կու տայ ռուսերէն եւ ֆրանսերէն ամփոփումը սկզբնամասին: Անկէ վերջ՝ կու տայ զանազան տարբերակներու բնագրերու գիտական հրատարակութիւնը, նաեւ Հայ-ղփչաղերէն խմբագրութիւնը: Վերջապէս՝ «Ազխուսակներ, Աղբիւրներ» եւ այս չահեկան հատորը կը վերջանայ: Մարտիրոսեան լաւ գործ մը՝ ընտիր կերպով կատարած է:*

*Հոս զուցէ աւելորդ չըլլայ յիշել որ Մարգարէ Արճիչեցիէ գրուած ծանօթ* 1526 *թուականով օրինակս* (*յիշուած այս հատորին էջ* 360*ի վրայ*)*, կը պատկանի* AB *տարբերակ խումբին:*

* * *

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ: Գրեց՝ Տիկին Շուշանիկ Նազարեան: Երեւան, 1969: Լաթակազմ, ութածալ, էջ 442:

*Շուշանիկ Նազարեանի վաստակաւոր գրչին կը պարտինք «Պատմութիւն Ցարման Մանկան», «Յովհաննէս Կարնեցիի Տաղարան», «Պաղտասար Դպիր»* (*Ա. Մնացականեանի հետ*) *արժէքաւոր հատորները:*

*Տիկին Նազարեան «Պետրոս Ղափանցի՝ ԺԸ. դարու հայ դասական բանաստեղծու-*